«Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ
ՀՀ, 0033 ք. Երևան, Հ. Հակոբյան փող. 3,
հիմնական մասնաշենքի 2-րդ սեկցիա, 5-րդ հարկ

"Center for Rights Development" NGO
RA, 0033 Yerevan, 3 H. Hakobyan street,
main building, 2nd section, 5th floor

ՀՀ Արմավիրի մարզպետ
Համբարձում Մաթևոսյանին
«Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ
նախագահ Վիոլետտա Զոփունյանից

31.10.2019թ.

Հարցում

Հարգելի պարոն Մաթևոսյան,

«Իրավունքի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը «Մարդու իրավունքները բժշկական օգնություն ու սպասարկում ստանալիս» ծրագրի շրջանակներում իրականացնում է ՀՀ-ում առողջապահական ծառայությունների մատչելիության ուսումնասիրություն, որի շրջանակներում անհրաժեշտ է համապատասխան տեղեկատվություն:

Հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն հետևյալի վերաբերյալ՝

1. Ինչպիսի՞ առողջապահական կենտրոններ կան Արմավիրի մարզում՝ պետական և ոչ պետական (բուժկետ, բուժամբուլատորիա, պոլիկլինիկա, հիվանդանոց, ախտորոշման կենտրոն, լաբորատորիա, առողջության կենտրոն և այլն): Խնդրում ենք նշել առողջապահական կենտրոններն ըստ համայնքների ու բնակավայրերի:
2. Որքա՞ն աշխատակից ունի յուրաքանչյուր կենտրոնը. խնդրում ենք նշել նաև ինչ մասնագետներ են (ընտանեկան բժիշկ, թերապևտ, գինեկոլոգ և այլ), առանց անձի նույնականացման տվյալները նշելու:
3. Ինչպիսի՞ ծառայություններ է մատուցում յուրաքանչյուր առողջապահական կենտրոնը: Ո՞ր ծառայություններն են տրամադրվում անվճար, համավճարի կամ վճարովի եղանակով:
4. Ո՞ր համայնքներին ու բնակավայրերին է սպասարկում յուրաքանչյուր առողջապահական կենտրոնը և տարեկան որքա՞ն բնակչի է սպասարկում:

Հարկ եղած դեպքում պատրաստ ենք քննարկել անհրաժեշտ տեղեկատվության հետ կապված բոլոր հարցերը:

Կանխավ շնորհակալություն ենք հայտնում աջակցության համար:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարով՝ +37494829201, Լիլիթ Ալեքսանյան (Ծրագրի համակարգող):

Պատասխան նամակը, հնարավորության դեպքում, խնդրում ենք ուղարկել հետևյալ էլ. հասցեին՝ alek.lilit@gmail.com

Կազմակերպության նախագահ՝ Վ. Զոփունյան

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» "CENTER FOR RIGHTS DEVELOPMENT" 00885303